



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 67 31 18 04 201 60


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 56 կետի պահանջներով հրամայում եմ.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանում սովորողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացակարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 2012թ. մարտի 29-ի թիվ 58§8, 2015թ. հունվարի 20-ի թիվ 7§50 և 2015թ. հունիսի 8-ի թիվ 102§1 հրամանները:
3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ



Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵՂԻՏ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետ ԵՊՀ) սովորողների՝ մինչև 12 կրեղիտ առարկայական պարտքերի մարման գործընթացի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրամանի 16-րդ կետի պահանջների:

1.2 Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո՝ մինչև 12 կրեղիտ առարկայական պարտքերը մարելու համար սահմանվում է երկու եղանակ՝

1.2.1 ուսումնական մոդուլի (դասընթացի) կրկնում և քննության (ստուգարքի) հանձնում,

1.2.2 ուսումնական մոդուլի (դասընթացի) քննության (ստուգարքի) վերահանձնում:

2. ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵՂԻՏ ՄՈԴՈՒԼԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԿՐԿՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

2.1 Ուսումնական մոդուլը (դասընթացը) կրկնելը թույլատրվում է սովորողների վերականգնման համար սահմանված ժամանակահատվածում ուսանողի դիմումի համաձայն՝ դասընթացի համար սահմանված վճարումը կատարելուց հետո:

2.2 Ուսումնական մոդուլի (դասընթացի) կրկնելն իրականացվում է ինչպես անհատական ժամանակացույցով, այնպես էլ համապատասխան ակադեմիական խմբի կազմում:

2.3 Կրկնված մոդուլի (դասընթացի) ընթացիկ և եզրափակիչ քննությունները և/կամ ընթացիկ ստուգումները և/կամ ստուգարքները կազմակերպվում են ԵՊՀ կրեղիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերի համաձայն:

2.4 Առարկայական պարտքերը վերահանձնելու համար սահմանվում է երկու հնարավորություն, որոնք կարելի է իրականացնել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը:

2.5 Ուսումնական մոդուլի (դասընթացի) քննությունների (ստուգարքների) վերահանձնումը կատարվում է ուսանողի դիմումի համաձայն՝ դասընթացի համար սահմանված վճարումը կատարելուց հետո:

2.6 Բակալավրիատի **առկա** ուսուցման համակարգում սովորողները 1-5-րդ կիսամյակների մինչև 12 կրեղիտ առարկայական պարտք(եր)ը պետք է վերահանձնեն ուսումնառության 2-րդ կիսամյակից մինչև 6-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

2.7 Բակալավրիատի **հեռակա** ուսուցման համակարգում սովորողները 1-7-րդ կիսամյակների մինչև 12 կրեղիտ առարկայական պարտք(եր)ը պետք է վերահանձնեն ուսումնառության 2-րդ կիսամյակից մինչև 8-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

2.8 Մագիստրատուրայի **առկա** ուսուցման համակարգում սովորողները 1-ին կիսամյակի մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը պետք է վերահանձնեն միայն 2-րդ կիսամյակում:

2.9 Մագիստրատուրայի **հեռակա** ուսուցման համակարգում սովորողները 1-3-րդ կիսամյակների մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը պետք է վերահանձնեն ուսումնառության 2-րդ կիսամյակից մինչև 4-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

2.10 Բակալավրիատի առկա ուսուցման 6-րդ, հեռակա ուսուցման 8-րդ, մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 4-րդ կիսամյակների քննաշրջանից մնացած պարտք(եր)ի համար, մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ի վերահանձնում չի նախատեսվում:

2.11 Վերահանձնման մեկ փորձ կատարած բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի, հեռակա ուսուցման 4-րդ կուրսի և մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի, մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք ունեցող սովորողների քննությունների վերահանձնման 2-րդ փորձը կազմակերպվում է ընթացիկ ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանում:

3. ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱՈՍՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Առարկայական պարտք(եր)ը վերահանձնելու համար առկա և հեռակա ուսուցման համակարգի սովորողները ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին հասցեագրված սահմանված ձևի (Հավելված 1) դիմումը լրացնում են ֆակուլտետի դեկանատում՝ հետևյալ ժամկետներում.

3.1.1 1-ին կիսամյակում՝ օգոստոսի 25-ից 31-ն և/կամ նոյեմբերի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում,

3.1.2 2-րդ կիսամյակում՝ հունվարի 24-ից 31-ն և/կամ ապրիլի 4-ից 10-ն ընկած ժամանակահատվածում:

3.2 Սույն ընթացակարգի 2.11-րդ ենթակետին վերաբերող դիմումների ընդունումը կազմակերպվում է հունիսի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում:

3.3 Ֆակուլտետի դեկանի թույլտվությունը ստանալուց հետո ուսանողը դիմումին կցում է վճարման անդորրագիրը և ներկայացնում դեկանատի գործավարին, ով նույն օրը դիմումը ներկայացնում է ԵՊՀ ընդհանուր բաժին:

3.4 Սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում և քննությունը վերահանձնելու թույլտվություն չի տրվում: Հաջորդ փուլում վերահանձնելու համար անհրաժեշտ է լրացնել նոր դիմում՝ դրան կցելով նախկինում կատարված վճարման անդորրագիրը:

3.5 Առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորողների՝ քննությունները վերահանձնելու մասին հրամանները տրվում են հետևյալ ժամկետներում.

3.5.1 1-ին կիսամյակում՝ օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 7-ը և/կամ նոյեմբերի 1-ից 14-ն ընկած ժամանակահատվածում,

3.5.2 2-րդ կիսամյակում՝ հունվարի 24-ից մինչև փետրվարի 7-ը և/կամ ապրիլի 4-ից 17-ն ընկած ժամանակահատվածում:

3.6 Ֆակուլտետը կազմում է քննությունների (ստուգարքների) վերահանձման ժամանակացույցը և ձևավորում հանձնաժողովներ հետևյալ ժամկետներում.

3.6.1 1-ին կիսամյակում սեպտեմբերի 1-ից 7-ը և/կամ նոյեմբերի 8-ից 14-ն ընկած ժամանակահատվածում,

3.6.2 2-րդ կիսամյակում փետրվարի 1-ից 7-ը և/կամ ապրիլի 11-ից 17-ն ընկած ժամանակահատվածում:

Լուծարքային շրջանի համար ձևավորված հանձնաժողովները կարող են գործել նաև սույն ընթացակարգով նշված վերահանձնումների ժամանակ:

Հանձնաժողովների կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

3.7 Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են առարկան դասավանդող դասախոսը, ամբիոնի վարիչը կամ նրա կողմից առաջարկված ներկայացուցիչը և ֆակուլտետի ղեկանը (ղեկանի տեղակալը) կամ նրա կողմից առաջարկված ներկայացուցիչը:

3.8 Քննությունների վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովի հրամանի նախագիծը ֆակուլտետը ներկայացնում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչություն:

3.9 Սույն ընթացակարգի 2.11 ենթակետին վերաբերող քննությունների վերահանձնման համար քննական հանձնաժողովները ձևավորում է հունիսի 10-ից 20-ն ընկած ժամանակահատվածում:

4. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Առարկայական պարտքերի վերահանձնման քննություններն (ստուգարքներն) անցկացվում են հետևյալ ժամկետներում.

4.1.1 1-ին կիսամյակում սեպտեմբերի 12-ից 25-ը և/կամ նոյեմբերի 21-ից 27-ն ընկած ժամանակահատվածում,

4.1.2 2-րդ կիսամյակում փետրվարի 15-ից 28-ը և/կամ ապրիլի 25-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Վերահանձնման քննություններն (ստուգարքներն) անցկացվում են դասերից դուրս:

4.2 Համաձայն ԵՊՀ կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերի, առանց եզրափակիչ գնահատմամբ և եզրափակիչ գնահատմամբ ուսումնական մոդուլների (դասընթացների) քննությունների վերահանձնումը կատարվում է հետևյալ կերպ.

4.2.1 Առանց եզրափակիչ գնահատմամբ ուսումնական մոդուլների (դասընթացների) քննությունների վերահանձնման ժամանակ ուսանողը բարձրացնում է իր արդյունարար միավորը մինչև անցողիկ 8 միավորը՝ վերահանձնելով անհրաժեշտ քանակի ընթացիկ ստուգումներ (պահպանելով ընթացիկ ստուգումներից և մասնակցությունից նախկինում ստացած միավորները):

4.2.2 Եզրափակիչ գնահատմամբ ուսումնական մոդուլների (դասընթացների) քննությունների վերահանձնման ժամանակ ուսանողը պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ (պահպանելով ընթացիկ քննություններից և մասնակցությունից նախկինում ստացած միավորները):

4.3 Վերահանձնման արդյունքները ֆակուլտետի ղեկանատի կողմից ներկայացվում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչություն՝ քննությունների ավարտից հետո երկու օրվա ընթացքում:

4.4 Վերահանձնման երկու փորձերից հետո առարկայական պարտք(եր) ունեցող սովորողները հեռացվում են Երևանի պետական համալսարանից: